ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ N «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 14.01.2019թ.ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01-1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան   փետրվարի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 14.01.2019թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցմամբ և ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված՝

1.1 Պայմանագրի 4.2 ենթակետում «մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը» բառերով:

1.2 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ից հանել «ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը» բառերը:

1.3 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Յուքոմ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00024873
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Հ. Եսայան
-------------------------------------	-------------------------------------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

POLADYAN KAREN 1911770055

Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2019.02.15 15:06:33 +04'00'

Հավելված N 1
«   » փետրվարի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 14 » հունվարի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01-1» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*Ընդամենը*
1	*32411130/521*	*1.Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն*	-	167 520	167 520	376 920	376 920	376 920	586 320	586 320	586 320	837 600	837 600	837 600	**837 600**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

POLADYAN KAREN 1911770055
Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2019.02.15 15:07:01 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9
Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 00024873
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Հ. Եսայան

(ստորագրություն)
Կ.Տ.

Digitally signed by ASATURYAN KAREN 4010830662
Date: 2019.02.14 11:33:18 AMT